ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱԹԵՆՔՈՒՄ

1998 թվականի ապրիլի 2-ին Հունաստանի մայրաքաղաք Աթենքի «Մեղարոն» համերգասրահի ճեմասրահներում հանդիսավորությամբ բացվեց «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսը: Բացման արարողությանը ներկա էին հույն և այլ ազգերի հարյուրավոր հանդիսատեսներ: Ներկաները մեծ գոհունակությամբ ընդունեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի ողջույնի խոսքը ցուցահանդեսի բացման առիթով, որը հունարենով ընթերցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Այնուհետև սրբազանը կարդաց «Մեղարոնի» գլխավոր տնօրեն Խրիստոս Լամբրակիսին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին կոնդակը... Ցուցահանդեսը բացված է... Հիացած հանդիսատեսները շրջում են սրահներում դիտելով հայ արվեստի շուրջ երկու հարյուր քսանի հասնող ինքնատիպ ցուցանմուշները:

«Մեղարոնը» Եվրոպայի լավագույն մշակութային համալիրներից մեկն է: Այն ունի երկու համերգային դահլիճ՝ 1000 և 500 տեղերով, երկու մեծ ճեմասրահ-դահլիճներ, որոնք նախատեսված են ցուցադրանքների, պարային, տոնական միջոցառումների, հանդիսավոր ընդունելությունների համար: «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսին «Մեղարոնի» ճեմասրահներում նախորդել էր «Բյուզանդական սրբապատկեր» ցուցահանդեսը:

Հունաստանի և Հայաստանի միջև օրավուր զարգացող միջպետական, հոգևոր, տնտեսական և այլ կապերի մեջ անմասն չի մնում և մշակույթը:

Ներկա ցուցահանդեսը շուրջ մեկ տարի տևած նախապատրաստական աշխատանքի արդյունք է: Նախ Հայաստան ժամանեցին «Մեղարոն» կենտրոնի ցուցահանդեսների կազմակերպման բաժնի վարիչը և նկարիչ-ձևավորողը: Ուսումնասիրվեցին Հայաստանի պատմության պետական թանգարանի, Մատենադարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների ցուցանմուշները, կատարվեց նախնական ընտրություն: «Մեղարոնի» աշխատակիցները, վերադառնալով Աթենք, ձեռնամուխ եղան այլ հետաքրքիր ծրագրերի: Որոշվեց Հայաստանից բերվող ցուցանմուշների հետ ցուցահանդեսում ներկայացնել նաև Հունաստանի այլևայլ թանգարաններում պահվող հայկական արվեստի գործերը: Պայմանավորվածություն կայացավ Աթենքի «Բենակի» թանգարանի և Թեսալոնիկ քաղաքի հայ մեծ բարերար, կոլեկցիոներ և ազգային գործիչ Կարապետ Գալֆայանի հետ:

«Հայաստանի գանձերը» ցուցահանդեսում հույն հանդիսատեսը հաղորդվեց հայ հոգևոր այնպիսի գանձերի հետ, ինչպիսիք են՝ Նոյան տապանի մասունքով մասնատուփը, Սբ. Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալների, Հովհաննես Մկրտչի, Հակոբ Մծբնեցի Հայրապետի մասունքներով մասնատուփերը, Սբ. Գրիգոր Լուսավորչի խաչվառը, «Խոտակերաց Սբ. Նշանը», Սևանի վանքի դուռը, ընտրագույն ձեռագրեր Մատենադարանից և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից: Ցուցահանդեսում մեծ տեղ են գրավում խեցեգործությունը (հիմնականում Քյոթահիայի ջնարակված աշխատանքները), արծաթագործությունը և գործվածքեղենը:

Ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներում հիշատակելի է Մայր

Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Հունաստանում Հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի, Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն տիկ. Անելկա Գրիգորյանի, փոխտնօրեն Իվետա Մկրտչյանի, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանի ներդրումը:

Ցուցահանդեսի առիթով «Մեղարոն» կենտրոնը լույս է ընծայել 150 էջանոց եռալեզու կատալոգ, որը բացվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Կաթողիկոսի Հայրապետական օրհնանքի խոսքերով: Ապա բովանդակալից հոդվածներով՝ «Արվեստները Հայաստանում և Բյուզանդիոնում» (Հելեն Էվանս), «Հայ-հունական հարաբերությունները» (Հրաչ Բարթիկյան), «Փիլիսոփայությունը միջնադարյան Հայաստանում» (Սեն Արևշատյան), «Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին Հայաստանի պատմության պետական թանգարան» (Իվետա Մկրտչյան), «Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիոնի դրամները» (Հենրի Սարգսյան) և այլն հանդես են եկել հայ և օտարազգի գիտնականներ: Մի քանի տասնյակ լուսանկարներով ձևավորված այս կատալոգի հայերեն ամփոփումը կատարված է հունահայ գրող Հակոբ Ջեալյանի կողմից՝ մասնակցությամբ պատմաբան Վիկտորյա Խաչատրյանի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ
«Հայաստանի գանձերը» ցուցահանդեսի
Մայր Աթոռի բաժնի պատասխանատու